«ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱ-ՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-257-14.08.2019-ԱՍ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Օրենքի նախագծով առաջարկվում է առաջին ծննդաբերության ժամանակ երկվորյակ երեխաներ ծնվելու դեպքում յուրաքանչյուր նոր ծնված երեխային տալ ծննդյան միանվագ տարբերակված նպաստ՝ երկրորդ երեխայի կարգաթվով սահմանված միանվագ նպաստի կրկնապատիկի չափով:

Համաձայն «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ պետական նպաստը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներից պարբերաբար կամ միանվագ տրամադրվող դրամական օգնություն է: Օրենքով սահմանված են նաև պետական նպաստների տրամադրման նպատակները:

Ակնհայտ է, որ նշված նպատակների շրջանակներում որևէ կատեգորիայի անձանց տրվող պետական նպաստի չափի ցանկացած ավելացում դրական է ազդելու այդ անձանց սոցիալական վիճակի վրա:

Ըստ այդմ՝ յուրաքանչյուր այդպիսի բարձրացում (փոփոխություն) պետք է դիտարկել պետական նպաստների ոլորտում վարվող քաղաքականության համատեքստում՝ հաշվի առնելով առաջնահերթությունները և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների ծախսարդյունավետությունը:

Շարադրվածի կապակցությամբ կարծում ենք, որ լրացուցիչ քննարկման կարիք ունի առաջարկվող փոփոխության բովանդակությունը՝ փոխկապակցված պետական նպաստների տրամադրման նպատակներին:

Մասնավորապես, երեխայի ծննդյան միանվագ նպաստը նախ և առաջ միտված է ժողովրդագրական իրավիճակի բարելավմանը, ինչը նաև Հայաստանի Հանրապետության կառավարության առաջնահերթություններից է, իսկ այդ նպաստի՝ որոշակի ծախսեր

հատուցելու կամ ընտանիքի կենսամակարդակի բարձրացման գործառույթներն ավելի շատ ածանցյալ են:

Հարկ ենք համարում նշել, որ երեխայի ծննդյան միանվագ նպաստի ոլորտում ցանկացած փոփոխություն պետք է բխի նշված մոտեցումներից՝ նախ և առաջ ներազդելով ընտանիքի (անձի) վերարտադրողական վարքագծի վրա:

Առաջարկվող փոփոխությունը որևէ կերպ չի կարող ազդեցություն ունենալ ընտանիքի (անձի) վերարտադրողական վարքագծի վրա:

Հաշվի առնելով շարադրվածը՝ անընդունելի ենք համարում թե առաջարկվող արտոնությունը երկվորյակներ ծնվելու դեպքերի վրա տարածելը, թե առաջին ծննդաբերության ժամանակ այն կիրառելը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հավանությանն արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի համաձայն՝ նախորդ ժամանակահատվածում արձանագրված ժողովրդագրական իրավիճակի զարգացման բացասական միտումները մեղմելու նպատակով նախատեսվում է մշակել և կյանքի կոչել ծնելիության խրախուսման, երիտասարդ և երեխաներ ունեցող ընտանիքներին աջակցության նոր ծրագրեր, որոնց շրջանակներում և ըստ անհրաժեշտության նախատեսվում է վերանայել գործող ծրագրերը:

Տեղին է նշել նաև, որ ժողովրդագրական իրավիճակի բարելավման համար իրականացվող աշխատանքների շրջանակներում ներկայումս քննարկվում է 1-ին և 2-րդ երեխայի ծննդյան դեպքում երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափն ավելացնելու հարցը՝ այն երեխայի ծննդյան կապակցությամբ առաջացող միանվագ ծախսերի հետ համադրելի դարձնելու նպատակով:

Ամփոփելով՝ ասենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունն օրենքի նախագծի ընդունումը գտնում է ոչ նպատակահարմար: